

Գահական ճառի այն մասը, որ վերաբերում է Անգլիայի արտաքին յարաբերութիւններին, հետեւեալ կերպով է կազմւած. «Բոլոր պետութիւններին հետ իմ ունեցած յարաբերութիւններն առաջնայ պէս բարեկամական են: Պարլամենտի յետաձգելու օրինակս ձեռք բերել ընթացքն այն տեսակ էր, որ պէտք է նոր ապահովութիւն տար եւրոպական ընդհանուր խաղաղութեանը, համաձայն Բերլինի դաշնագրում հաստատուած ըսկզբունքներին»:

«Վերջին պատերազմը Թիւրքիային շատ անհանգստութիւններ պատճառեց. այդ անկարգութիւնները հետեւեալով համար, դեռ շատ դժուար է մնում Անգլիային անել»:

Գահական ճառի մէջ մոռացված է յիշել և այն դաշնագրութեան մասին, որ Անգլիան կապել է սուլթանի հետ ստորագրելու առաջարկին վերջը դնելու մասին, և յոյս է յայտնուած, որ պարլամենտը չի դիմացայ այս գործին վերաբերեալ անցքերը նորին վիճաբանութեան ենթարկել, և աշխատել մշակել սնանկութեան և քրէական գործերին վերաբերեալ բոլոր օրէնքները: Վերջապէս ճառը վերջանում է այն խոստումով, որ հոգային կարուածներին վաճառման և ձեռքից ձեռք անցնելու օրէնքը նշանակուող դիւրութեան և զանազան փոփոխութիւններին կենթարկել:

80 թւականի պարլամենտը մեծ-մեծ յոյսերով է բացվում: Տեսնե՞ք ի՞նչ կը լինի նրա գործունէութեան արգասիքը...»

«Голосъ» լրագրի վերջին հեռագրերից մէկը հաղորդում է, որ մարիլի Սէլիքերիի աւտոգրութիւնը գնալով լաւանում է:

ՆԱԽԱԿ ՊԱՐԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ 16 յունվարի

Հացի թանգութիւնը Սալմաստում օրստօրէս սաստկանալու վրա է և ամենեւին էժանանալու յոյս չը կայ: Այժմ ցորենի մի բեւը ծախվում է վեց անգամ աւելի թանկ դնով, քան թէ սովորաբար առաջ միշտ ծախվելիս է եղել: Տեղացի հայերի մեծ մասը հազիւ կարողանում են հաց գտնել, մի կողմից էլ աւելացել է նրանց վրա Տաճկաստանի Աղբակ գաւառից այստեղ եկած բազմաթիւ հայ գաղթականներին հոգսերը, որոնց նոյնպէս պէտք է կերակրել, որ սովից չը մեռնեն: Միւս կողմից մահմետականները հանգստութիւն չեն ապրիս, որովհետեւ նրանք աւելի աղքատ են և աւելի հացի կարօտ: Եւ թանգութեան պատճառով առաջ են գալիս զանազան տեսակ անկարգութիւններ:

Յունվարի 3-ին պատահեց մի սարսափելի անցք: Մի պարսիկ Ախտաբանայ գիւղից, Աղբակ Յունեթի օջիւն անունով, ունենում է մի վեցամեայ աղջիկ ծաղիկով սաստիկ հիւանդացած: Հայրը մտածելով, որ իր աղջիկը երկար չի ապրի, աշխատում է նրա մահից օգուտ քաղել. վեր է առնում հիւանդ աղջիկը, կապում է իր շաւակին, և որպէս մուրացկան դիմում է Վալաթար անունով հայոց գիւղը: Այդտեղ Աղբակ իր շաւակով մտնում է մի տուն, որ պատկանում էր պ. Մարգարա Սրբուհանեանին և սկսում է ողորմութիւն խնդրել: Տանեցիկը ինչ որ տալիս են, նա զոհ չէ մնում և սկսում է աւելի պահանջել և սպառնալիքներ կարգաւ:

Վերջապէս տանեցիկը աշխատում են նրան մի կերպով հեռացնել, այդ միջոցին Աղբակ ժամանակ է գտնում, և իր ուսին բարձած ծաղկահան երեխային ձգում է հայ Մարգարի տան վառված հոնքի (թոնիկ) մէջ, և ինքը դուրս գալով աղաղակ է բարձրացնում, և միւս պարսիկներին օգնութեան է կանչում, ասելով, իբր թէ հայերը նրա երեխան խլեցին և ձգեցին հոնքի մէջ: Այդ միջոցին Մարգարի ընտանիքը կարողանում է երեխային դուրս բերել կրակի միջից փաթ ինչ այրված. բայց տաւալին կենդանի յանձնում են անգութ հօրը: Նա տանում է երեխային իր տունը, որը երկու օրից կետոյ մնում է: Այդ էր Աղբակի ցանկութիւնը, որ իր նպատակին հասնէր. նա զանգաւորում է իր գիւղի մի զանի աղայներուն, և նրանք խնդր Մարգարին տուգանքի են ենթարկում, բաւական փող են առնում և տալիս Աղբակին, և իրանք ևս բաւական կաշառքներ են ստանում: Մարգարի

պատճառով վնասվում են և մի քանի ուրիշ հայեր, որ նրան պաշտպանում էին:

Դրանով ևս բանը չէ վերջանում, տեղային իշխանութիւնը լսելով, սկսում է Մարգարին չարչարել և նրանից փող պահանջել, մինչև Աղբակը խղճահարկելով, գնում է մի մօլայի մօտ, խոստովանվում է, թէ Մարգարը կամ նրա տանեցիկը յանցաւոր չեն, այլ ինքն է եղել իր աղջկայ մահվան պատճառը, և սովը կամ քաղցածութիւնը ստիպեց նրան մի այսպիսի սպանութիւն գործել: Այս խոստովանութեան հիման վրա մօլան մի վճիռ է գրում և մօտ յիսուն հալիների կնիքով վաւերացնում է, և յանձնում է Մարգարին, որ նա անմեղ է Աղբակի երեխայի սպանման գործի մէջ:

Այսպիսի զոգարտութիւններից վախեցնալով, հայերը այժմ ստիպված են իրանց դռները փակել դրսի մուրացկանների առջև, որոնց թիւը օրըստօրէ բազմանում է: Զարմանալիս այն է, որ պարսիկները առատութեան տարիներում հայի հացը չէին ուտում, պիղծ համարելով, իսկ այժմ սովի ժամանակ ամեն կողմից թափվում են և հաց են պահանջում: Յանկալի կը լինէր, որ պարսիկները այժմ նոյնպէս մտածէին, թէ հայի հացը պիղծ է մահմետականի համար, գոնէ կազատվէինք նրանցից:

Ռուսէն Ռուսէնանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Daily News» լրագրին Մարդիկից հեռագրում են յունվարի 27-ից հետեւեալը. «Հռոմով Օտէրօի դառը կը սկսի: Պաշտպանը պահանջեց որ մեղադրվածին բժշկական ընտելեան ենթարկեն: Բժշկիկները հետազօտելով մեղադրվածին այն եղբայրացութեան հասան, որ նրանցից մի քանիսը նրան մտաւորապէս բոլորովին առողջ են համարում, իսկ երկու բժիշկներ նրան խելագար հրատարակեցին: Մեղադրվածը շարունակում է հաստատել, որ իր արած գործը բոլորովին քաղաքական նպատակ չունէր»:

«Ալեքսանդր» «Deutsche Zeitung» լրագրին Ֆիլիպպոյից հեռագրում են, յունվարի 28-ից հետեւեալը. «Բօլզարական էկզարիւր երէկ յայտնեց բոլզարական իշխանին և իշխան Բօգորիլին իր շուտ և, Պոլսի ճանապարհ ընկնելու մասին, ուր նա դիտաւորութիւն ունի: Երկուսի իր առաջնորդարանը: Իշխան Բօգորիլին և Ֆիլիպպոյի քաղաքային ժողովը պատգամաւորութիւնը ճանապարհ կը դնեն նրան մինչև Գերմանիա»:

«Ալեքսանդր» «Polit. Correspond.» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են յունվարի 27-ից հետեւեալը. «Անգլո-թիւրքական դաշնագրութիւնը, գերեզմանաւորութիւնը օղջնացնելու մասին, ութ յօդուածներ է պարունակում իր մէջ: Այդ դաշնագրութեան զօրութեամբ, թիւրքաց ջրերի մէջ լողող թուր կասկածաւոր նաւերը, ի բաց առնելով միայն պատերազմական նաւերը, կարող են բռնվել և խուզարկութեան ենթարկվել: Յանցաւորները քրէական օրէնքներով կը պատժվեն»:

ՄԵԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 փետրվարի: Այսօր Բօլզարական իշխանը հասաւ Ս. Պետերբուրգ: «НОВОСТИ» լրագրին լսել է, որ համալսարանի ուսանողների ամուսնութիւնը, ինչպէս և ամուսնացած մարդոց համալսարան ընդունվելը պէտք է արգելվեն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 փետրվարի: Պետական բանկի 5% տոմսին առաջին շրջանի արժէ 93% թ. երկրորդ 92% թ., երրորդ 93 թ. 50 կ., չորրորդ 93% թ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսին արժէ 229 թ., երկրորդ 228 թ. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսին արժէ 91 թ. 25 կ., երկրորդ 91 թ. 25 կ., երրորդ 91 թ. 1% կ., ոսկին արժէ 7 թ. 63 կ.: Ռուսաց 1 թուրք 1 ճուղճի վրա արժէ 25% թ. պէտք. Ռուսաց 100 թուրք Գերմանիայի վրա արժէ 219 մարկ 7% պէտք, Փարիզի վրա 272 Ֆրանկ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 փետրվարի: «Правит. Вѣстн.» լրագրը հաղորդում է, որ երկի փետրվարի 5-ին կէսօրից յետոյ, Եօթերորդ

ժամին ձեռնվայ պալատի գլխաւոր պահապանի կացարանի ներքնայարկում ձայնիւն առաջացաւ: Ֆինլանդեան զինուորական պահապան գնդի ստորաստիճան զինուորականներից 8 հոգի սպանվել են, իսկ 45 հոգի էլ վիրաւորվել են: Կացարանի յատակը և դահլի մի քանի խողովակները փչացած են: Հրամայված է ձայնիւնի պատճառները հետազօտելու:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 փետրվարի: Սաբուրով ղեկավար փետրվարի 3-ին հասաւ Ս. Պետերբուրգ:

ԻՐԿՈՒՏՈՒԿ, 4 փետրվարի: Չինաստանի նախկին դեսպան Պետերբուրգում, Չուեղիսու, չինաց Կայսրի հրամանով աստիճաններից զրկված է և դատաստանին է ենթարկված: Իրիւստու կում թանգութիւն է: Հաճարի ալիւրի պուղը արժէ 3 թուրք 40 կօպ: Նրջալայկում դիֆտերիա է տիրում: Ձայնաւորների պատգամաւորութիւնը խնդրում է փակել տալ արաղի գործարանները և ապահովացնել բնակիչների համար հացի պաշարը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 փետրվարի: «Прав. Вѣстн.» լրագրը հաղորդում է որ մինիստր Նաբոկով փետրվարի 2-ին սկսեց իր պաշտօնավարութիւնը:

ՓԱՐԻՋ, 5 փետրվարի: Ֆրէյսինէ շուտով կը հրատարակի այն ղօղումները, որոնք վերաբերում են յոյն-թիւրքաց սահմանների ուղղելուն և Բուլղարիայի հրէաների աղատութեանը:

ՎԻԵՆՆԱ, 5 փետրվարի: Պաշտօնապէս հրատարակված է, որ Կօնրադ Ժողովրդական լուստրութեան մինիստր է նշանակված, Կըրիլաուս նշանակված է դաւանութիւնների մինիստր, և Իստրէմայր էլ Ֆինանսների մինիստր: Կայսրը կատարեալ շնորհակալութիւն է յայտնում ցոյց տուած ազգասիրական անձնանութիւնների մասին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 փետրվարի: Պետական բանկի 5% տոմսին առաջին շրջանի արժէ 93 թ. 50 կ., երկրորդ 93 թ., երրորդ 93 թ. 50 կ., չորրորդ 93 թ. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսին արժէ 228 թ. 25 կ., երկրորդ 227 թ. 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսին արժէ 91 թ., երկրորդ 91% թ., երրորդ 91% թ., ոսկի 7 թ. 59 կ.: Ռուսաց 1 թուրք 1 ճուղճի վրա արժէ 26 պէտք. Ռուսաց 100 թուրք Գերմանիայի վրա արժէ 221 մարկ, 25 պէտք, Փարիզի վրա 272 Ֆրանկ: Տրամադրութիւնը խաղաղ է:

Իմպերիա—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԵՌՆԱՆ ԻՎԱՆ ԿՈՆՏԱՆՏԻՆՈՎԻՉ ԲԱԳՐԱՏԻՐ ՄՈՒՐՈՒՆԵԿԻ Ե ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՆԱՆ ԱՌԵՏԻՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ յայտնում է, որ ՄՈՒՏԵՐԻ համար մինչև ՆՈՐ կարգադրութիւնը վճարում է:

ՄԻՆՁԵՆ ՊԱՆԱՆՁԸ 3%
ԺԱՄԱՆԱԿԱՆ ՄՈՒՏԵՐԻ
ՎԵՏ ԱՄՍՈՎ 6%
ՄԻ ՏԱՐՈՎ 7%
ԵՐԿՈՒ ՏԱՐՈՎ 7 1/2%

Բացի այդ 2-դ կարգի մատերերին ընկերական ապահովագրերով տարեկան 8% և աւելի:

2—3

ՀԱՅՏԱՐԱՐ Դատարանի 4 բաժնի դատաստանական ՊՐԻՍԱՎ ՎԱՍԻԼԵՆԿՈ Քաղաքային օրէնսդրութեան 1030 յօդուածի համեմատ յայտնում է, որ ՓԵՏԲՈՒՐԻ 16-ին առաւօ

տեան 10 ժամին, Երեւանեան հրապարակի վրա, Թամանշիկի քարվանսարայի մօտ, պօլիցիական վարչութեան հանդէպ ԱՅՈՒՐԻՈՎ ԿԸ ԾԱԽՎԻ ԱՅՐԻ Է ՓԵՄԻԱ ՄԱՅԻՍՈՒՐՈՎԻ շարժական ԿԱՅՔԸ, որ բաղկացած է զանազան կահ կարասիքից, պահարաններից, բուժիտից և այլն և որ գնահատված է 148 թ.: ԱՅՐԻ ՄԱՅԻՍՈՒՐՈՎԻ կայքը ծախվում է Ստեպան Պոմպալովի 1880 թ. ՊԱՐՏԻՆ և 1876 թուի սեպտեմբերի 14-ից սկսած պարտքի 80400 թ. և դատաստանական ծախս 120 թ. ՁԸ ՎԱՍԻԼԵՆԿԱՆ մար:

2—3

ՆԻԿՈԼԱՅԵՆԻՍԿԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ՌՈՒՍՍԵ ՌԵՍՈՒՄԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ հարկաւոր է ՎԱՐՁԵՒ ԶԵՒ Զորս մեծ և չորս միջակ սենեակներ մեծ բաղով, Հաւաքարում, աւելի ՊՕԿՐՈՎՍԿԻ ԿԱԶԱՐՄԻ մօտերում:

Այդպիսի շինութիւն ունեցողներին խնդրում եմ շնորհ բերել յիշեալ ուսումնարանը, ՊՕԿՐՈՎՍԿԻ ԿԱԶԱՐՄԻ ԳԻՄՆԱՅ, և խօսակցել պայմանների մասին ուսումնարանի տեսչի հետ, ամենայն օր ճաշից յետոյ 3 ժամից մինչև 7 ժամը երեկոյեան:

2—3

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, որ աւարտել է իւր ուսումնա Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ օրիորդաց ԳԻՄՆԱՅԻՆԱՆԵՐԻՑ միին մէջ, ցանկանում է վարժուհի պաշտօն ստանալ Կովկասի ՀԱՅՈՑ ՌԵՍՈՒՄԱՐԱՆԻՆԵՐՈՒՄ: Պայմանները խնդրում եմ զգուշացնել հետեւեալ հասցէի. С. Петербургъ, Новая улица, домъ № 14 кв. № 10 Хр. Ив. Иоану.

4—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ՌՈՒՍՍԵ ԲԱԶԱՐԻ Ե ՀԱՆՈՒՐԱՐՈՒ շրջանային վրա կառուցված են ԱՌԵՏԻՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ վարժող տալու համար. ուսուցիչ բաղարի վրա 18 համարների և Հաւաքարի հրապարակի վրա 40: Յիշեալ շինութիւնները ՎԱՐՁՈՎ, վերջին 3ԱՆԿԱՑՈՎՆԵՐԸ հրաւիրվում են քաղաքային վարչութիւնը, որի ԳՐԱՍԵՆԱԿՈՒՄ ամենայն օր, բացի տօն օրերից, առաւօտեան 10 մինչև 2 ժամը երեկոյեան վարձի ՊՕՄՄԱՆԵՐԸ կը յայտնվեն:

2—3

ՓԱՐՈՍ ՀԱՅՍՏԱՆԻ

Վերնագրով վեցամեայ ՊԱՏԵՐԱԶԱՐԻ հանդիսի 1880 ամի առաջին տետրն տպատուելի բաժանորդաց: Այս տետրին մէջ տըպուած կան 36 ՊԱՏԵՐ, յորոց 12-ն ԱԶԳԱՅԻՆ են: ԲԱՅԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ 1880 ամի երկու տետրակաց գինն է 2 ռուբլի. իսկ առանձին առանձին գնողների համար իւրաքանչիւր տետրի գինն է 1 թ. 50 կ. հանդերձ առաքմամբ:

Հրատարակիչ Զարմայր Մետրեանց:

3—4

2. Գրիգորեանցի «Կովկասեան գրաւաճառանոցում» ծախվում են՝

1. Գ ա լ Ֆ ա յ ե ա ն. Ա.—բառգիրք Հայ-գարգիլաբէ: Dictionnaire Armenien Français. գինն է. 6 թ.
2. Գ ա լ Ֆ ա յ ե ա ն. Ա.—Հայկական զեղապրութիւն, գինն է. 1 թ.
3. Մ ե ծ ա ու լ ե ն ա յ (Նիշէ վարժապետ) —Նրգարան աղջկանց և աշակերտուհիաց հայկական ուսումնարանաց: Հատ. ա. գինն է. 1 թ.

2—3